Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արտադասարանական այցելությունները որպես ուսումնառության մոտիվացնող մեթոդ

Հետազոտող ուսուցիչ՝ «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության ուսուցիչ՝ Լուսինե Համբարձումյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 8
ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ 8
ԳԼՈՒԽ II 12
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՉՔՆԱՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես Լուսինե Մելքոնի Համբարձումյանն եմ, աշխատում եմ «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, դասավանդում եմ «Պատմություն», «ՀԵՊ», « Հասարակագիտություն» առարկաները: Ունեմ 18 տարվա մանկավարժական փորձ:

Այսօր ոչ մեկիս համար էլ գաղտնիք չէ, որ 21-րդ դարը բազմաթիվ մարտահրավերների առջև է կանգնեցրել համաշխարհային հանրությանը: Եվ իրականում այդ մարտահրավերները տարբեր են՝ քաղաքական, տնտեսական խնդիրներից մինչև լուրջ բնապահպանական խնդիրներ:

Քիչ չեն խնդիրները նաև կրթության ոլորտում և շատ կարևոր է, թե տարբեր պետություններ ինչ տեսլականներ են մշակել այդ խնդիրները լուծելու համար: Այս համատեքստում շատ կարևոր է ցանկացած պետության ուսուցչի գործունեությունը՝ ով կլինի այնքան պատրաստված, որ կկարողանա ճիշտ կազմակերպել հաջորդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը:

Ինչպես արդեն ասվեց, ժամանակակից գրեթե բոլոր հասարակությունները բախվել են 21-րդ դարի այս խնդիրների հետ և բացառություն չէ նաև հայ հասարակությունը:

Ժամանակակից կրթությունը կարևորությունը տալիս է սովորողի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, որպեսզի այսօրվա սովորողը վաղը դառնա արժանի քաղաքացի և կարողանա ճիշտ օգտագործել իր ստացած գիտելիքները: Ուրեմն խորհրդային տարիներից ժառանգություն մնացած կրթահամակարգը այլևս ժամանակավրեպ է, քանի որ այն չի տալիս սովորողին նրան այդքան անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները:

Սակայն կրթական համակարգում ցանկացած տեսակի բարեփոխումներ կատարելու համար անհրաժեշտ են համապատասխան ռեսուրսներ՝ արդյունավետ իրականացնելու համար կրթական պետական չափորոշիչներով նախատեսված գործողությունները:

Այդ ռեսուրսներն են՝

- կրթական ծրագրերի բարելավում
- ահրաժեշտ գիտելիքներով և կարողություններով զինված ուսուցիչներ
- հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմաններ բարելավում,անվտանգ և ապահով միջավայրի ստեղծում
- կրթական պաշարների և տեխնիկական ժամանակակից սարքավորումներով դպրոցների զինում:

Հետազոտության կենտրոնական հարցն ինձ համար այս պահին կայանում է նրանում, որ, չնայած նրան, որ մենք վաղուց արդեն թևակոխել ենք 21-րդ դար, բայց այսօր ՀՀ շատ դպրոցներում բացակայում են ժամանակակից տեխնիկական այն միջոցները, որոնց օգնությամբ դասապրոցեսը կարելի է դարձնել ավելի արդյունավետ՝ այդ թվում նաև մեր դպրոցում:

Հետազոտության նպատակն է – բացահայտել ուսումնառության այնպիսի մեթոդներ, որոնք ուսումնական հաստատությունում ժամանակակից տեխնիկական միջոցներ չունենալու դեպքում էլ ուսումնառությունը սովորողի համար կդարձնեն արդյունավետ և հետաքրքիր:

Երկար եմ մտածել այս հարցի շուրջ, կիրառել եմ զանազան մեթոդներ, փորձել եմ անհատական համակարգչով լուծել որոշակի խնդիրներ: Ճիշտ է դրանք տվել են որոշակի արդյունքներ, բայց դա այն նշակետ չէր, որին ես ուզում էի հասնել:

2020 թ.-ի 44-օրյա պատերազմից հետո հատկապես, որպես պատմության մասնագետ, երբ առաջին անգամ մտա դասարան, ես սովորողների աչքերում նկատեցի տարօրինակ անտարբերություն սեփական պատմության նկատմամբ, որի մեջ արտահայտված էին և ջղայնություն և թերահավատություն և վախ ապագայի հանդեպ, իսկ ինչն ինձ ամենաշատն էր բարկացնում, որ կային նաև

աշակերտներ, ովքեր խորապես չէին էլ գիտակցում հայրենի հողի կորստի գաղափարը և հենց այս ճակատագրական պահերին էլ իմ գլխում սևով սպիտակի վրա գրվեց մի բան, որ անկախ բոլոր դժվարություններից ու խոչընդոտներից, որ կարող են հանդիպել ինձ այդ ճանապարհին, ամեն գնով պիտի հասնեմ նրան, որ գոնե իմ դասղեկական դասարանի բոլոր երեխաները, մինչև հիմնական դպրոցն ավարտելը, պիտի ճանաչեն իրենց հայրենիքը, հայրենիքի բոլոր պատմամշակութային վայրերը, ամեն սար ու ձոր, ամեն ծառ ու թուփ և ինձ համար ընտրեցի կարգախոս՝ « **Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից**», կարգախոս, որն այսուհետ դրվելու էր իմ և իմ սաների բոլոր գործողությունների հիմքում :

Այսպիսով այս հետազոտական աշխատանքն իրականացնելու հիմքում ես դրել եմ երկու կարևոր հարց՝

1. Ինչպես ձևավորել հայրենասիրություն յուրաքանչյուր աշակերտի մեջ՝ արտադասարանական այցելությունների միջոցով:
2. Ինչպես արդյունավետ կերպով դասավանդել պատմություն ձեռքի տակ չունենալով տեխնոլոգիական ժամանակակից գործիքներ՝ չձանձրացնելով 21-րդ դարի աշակերտին:

Առաջին հայացքից թվում էր, թե ամեն բան հեշտ է լինելու, ընդամենը ընտրել վայրը և ի գործ: Սակայն այս աշխատանքն իրականացնելու ճանապարհին ես բախվեցի բազում խնդիրների հետ, որոնց մասին չէի էլ պատկերացնում՝

Խնդիրներ.

1.Տնօրենի անհանգստությունն ամեն անգամ, երբ ես պատմում էի երեխաներին համապատասխան պատմամշակութային վայրեր տանելու մասին:

2.Ֆինանսական խնդիրները, որոնք ծառանում էին իմ առաջ:

3.Լուծել ապահով տրանսպորտի խնդիր՝ երեխաների անվտանգ տեղափոխությունն ապահովելու համար:

4.Ծնողների անհանգստությունն ու ֆինանսական հարցերի հետ կապված դժվարությունները:

5.Կազմակերպչական բազում խնդիրներ:

Խնդիրների լուծմանն ուղղված քայլեր.

Այս խնդիրներին լուծումներ տալու համար ես ինձ համար մշակեցի քայլերի հաջորդականություն՝

Քայլ 1- Որոշեցի սկսել աշակերտներից: Ես նրանց պատմեցի իմ գաղափարների մասին, որ պլանավորում եմ ամեն ամիս կազմակերպել արտադասարանական առնվազն մեկ այցելություն մեր հայրենիքի պատմամշակութային որևէ վայր, ցանկալի է, որ այդ վայրը լինի այն քիչ բացահայտվածների ցանկում, որոնք այսօր շատ-շատ են Հայաստանում և միևնույն ժամանակ իրենցից մեծ արժեք են ներկայացնում:

Ինչպես և սպասում էի, աշակերտների կողմից այս գաղափարները արժանացան մեծ ոգևորության, թեև նրանք էլ սկզբում թերահավատորեն էին մոտենում այս ծրագրի իրագործմանը:

Քայլ 2-Զրույց ծնողների հետ:

Ի՞նչ արեցի.

Ես հրավիրեցի արտահերթ ծնողական ժողով :

Նախ ներկայացրեցի իմ պլանները՝ կապված արտադասարանական այցելությունների հետ, հետո էլ բացատրեցի, թե որքան կարևոր են դրանք երեխաներին իրենց հայրենի երկրի հետ ծանոթացնելու, այն անսահման սիրելու և վերջապես ուսումնառության մեջ նրանց մոտիվացնելու համար: Երբ ես իմ գաղափարները մանրամասն կերպով նրանց ներկայացրեցի, իհարկե ծնողների մեծ մասին այդ գաղափարները դուր եկան, նամանավանդ, որ նրանցից շատերը խոստովանեցին, որ ինչ-ինչ պատճառներով իրենք իրենց երեխաներին շատ քիչ վայրերի հետ են ծանոթացրել: Սակայն կար նաև ծնողների մի հատված, ովքեր մտավախություն ունեին, որ կարող են առաջանալ ֆինանսական խնդիրներ: Ցավոք, այսօր դպրոցներում արտադասարանական այցելությունները

ասոցացվում են **«ուտել- խմելու»** հետ և հարկավոր եղավ նրանց բացատրել, որ ոչ մի այցելության ժամանակ չեն լինելու նման ավելորդ ծախսեր, միայն պետք է լուծել տրանսպորտի խնդիրը, իսկ ինչ վերաբերվում է սնունդին, ապա ամեն երեխա իր այդ օրվա սնունդը կվերցնի իր հետ:

Քայլ 3-Ես զրուցեցի նաև տնօրենի հետ, պատմեցի նրան իմ գաղափարների մասին, մանրամասն բացատրեցի, որ բոլոր այցելությունները լինելու են նպատակային և ծառայելու են ուսման մեջ կոնկրետ վերջնարդյունքների հասնելու համար: Չնայած որոշ մտավախությունների և անհանգստությունների, տնօրենը նույնպես ողջունեց այս մեթոդի կյանքի կոչելուն ուղղված իմ ջանքերը: Այստեղ ինձ թերևս օգնեց այն հանգամանքը, որ տնօրենս նույնպես պատմաբան է և շատ լավ հասկանում էր, թե ինչ եմ ես ուզում:

Քայլ 4-Հարկավոր էր կազմել ամենամսյա այցելությունների հստակ ծրագիր, ընտրել վայրեր, որոնք կհամապատասխանեին և երեխաների ֆիզիկական կարողություններին և կլինեին նպատակային: Եվ ես սկսեցի ուսումնասիրել Հայաստանի բոլոր տասը մարզերում գտնվող պատմամշակութային վայրերը: Այցելում էի տարբեր զբոսաշրջային կազմակերպություններ, ստանում տարբեր խորհրդատվություններ, հարցուփորձ էի անում մարզերում բնակվող բոլոր բարեկամներիս և ծանոթներիս:

Քայլ-5 Հարկավոր էր գտնել հարմարավետ, ապահով և ինչու չէ, նաև հնարավորինս մատչելի տրանսպորտ: Այս խնդիրը ևս հաջողությամբ լուծվեց:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԸ

«Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հիմնական դպրոց վերջնարդյունքներ

1) Հետազոտի հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներին ու բացթողումները
2) հասկանա պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը
3) ցույց տա հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ
4) Զարգացնի քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումնեևը հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:
5) Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ

Անդրադարձ կատարեմ 3-րդ կետին, որը շատ եմ կարևորում:

Հայրենիքը դա այն տարածքն է, որտեղ ապրում է որևէ ժողովուրդ և կերտում է իր պատմությունը: Աշխարհի յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր հայրենիքը: Դա

այն տարածքն է, որտեղ նա դարեր շարունակ ապրել է իր պատմությունը ստեղծելով: Քիչ ժողովուրդներ են ծնվել և ապրել իրենց ծննդավայրում:

Այս առումով Հայկական Լեռնաշխարհը համարվում է հայերիս և հայրենիքը և նախահայրենիքը:

«Մեր երկրագնդի վրա սահմանավոր մի կետ կա, մի կտոր հող, որից առնված է մեր կենդանի կավը, որին միայն հարազատ ու բնիկ են մեր մարմինն ու ոգին- առավելապես ոգին: Մեր հայրենիքն է այդ հողը »:

Գարեգին Նժդեհ /աֆորիզմներ հայրենիքի մասին/

Նախ պետք է ճանաչել հայրենիքը և հետո այն սիրել, սիրել անսահման, սիրել անմնացորդ, սիրել հայրենիքի ամեն սարն ու ձորը, ամեն քարն ու թուփը:

Հայրենաճանաչությունը սկսվում է պարզ սիրուց: Հայրենաճանաչությունը հողին կապվելն է, նրա ներկայությունը զգալը:

«Ով չի ճանաչում իր հայրենիքը , չի կարող սիրել այն»:

Ռաֆֆի /աֆորիզմներ հայրենիքի մասին/

Ինչու է ինձ համար այդքան կարևոր, որ այսօրվա սովորողը հնարավորություն ունենա դեռ դպրոցից արշավների միջոցով ճանաչելու հայրենիքը իր ողջ գեղեցկությամբ ու շքեղությամբ, որովհետև, առավել քան վստահ եմ, որ հենց այդ սովորողն է վաղը դառնալու լրիվ այլ որակներով օժտված քաղաքացի:

Հայրենաճանաչությունը աներևույթ ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքի ընթացքում, եթե անգամ տվյալ մարդը դա չի գիտակցում: Հայրենաճանաչ հայը բոլորովին ուրիշ կեցվածք, դրսևորում ունի հայրենիքի նկատմամբ: Հայրենաճանաչությունն ավելի ազնվացնում է մարդուն և օրինակելի քաղաքացի կերտում նրանից, դարձնում երկրին ավելի պիտանի:

Ցավով պիտի նշեմ, որ շատ խնդիրներ, որոնց առաջ կանգնած է այսօր մեր պետությունն ու հասարակությունը, առաջացել են հենց այն բանից, որ շատ քիչ են այսօր մեր մեջ իրապես հայրենաճանաչ քաղաքացիները:

Ես ունեմ վիճակագրական տվյալներ իմ բոլոր ընկերների շրջանում, որոնց հետ բազմիցս մասնակցել ենք տարբեր արշավների և ովքեր ունեն ամենատարբեր մասնագիտությունները-**նրանցից ոչ մեկը չի լքել մեր հայրենիքը, չնայած այսօր մեր առջև ծառացած բազմաթիվ խնդիրների:**

Սա ինձ համար վիճակագրություն է:

Այստեղ նաև ուզում եմ նշել, որ մասնագիտությամբ լինելով պատմաբան և բացի պատմությունից դասավանդելով նաև Հայոց եկեղեցու պատմություն առարկան, ես իմ առաքելությունն եմ համարում սովորողին դարձնել հայրենաճանաչ բազմապիսի արշավների և այցելությունների միջոցով:

Այս մեթոդը ես կիրառել եմ այն դասարանում, որի դասղեկությունը ստանձնեցի 2017-2022 թթ.-ին: Այսինքն մեթոդի կիրառումը տևել է 5 տարի:

Յուրաքանչյուր դասարանում, սովորողների տարիքային առանձնահատկություններից ելնելով, ինչպես նաև ելնելով հանրակրթական չափորոշչի պահանջներից, ես առանձնակի խնամքով էի ընտրում այն վայրերը, որոնք մենք պետք է այցելեինք ամեն ամիս:

Օրինակ՝ 5-րդ դասարանում դրանք ավելի շատ եկեղեցիներ էին, քանի որ նոր էինք սկսել ուսումնասիրել ՀԵՊ առարկան և ինձ համար շատ կարևոր էր որ երեխան արդեն այս տարիքում հասկանա և ընդունի մի պարզ ճշմարտություն, որ **Չկա Հայ Առաքելական եկեղեցի՝ առանց հայ ժողովրդի,չկա հայ ժողովուրդ՝ առանց Հայ Առաքելական եկեղեցու:**

Իսկ դրանում համոզվելու համար մենք պետք է այցելեինք պատմական մեծ դեր ու նշանակություն ունեցող եկեղեցիները:

Ես փորձեցի երեխաներին այս ընթացքում հնարավորինս ներկայացնել հայոց եկեղեցու այն դարավոր ուղին, որն անբաժանելի է եղել հայ ժողովրդի անցած մաքառումով հարուստ պատմությունից: Հայոց եկեղեցու գերակա առաքելությունը եղել է և կա հայի ինքնության անաղարտ պահպանումը՝ որպես քրիստոնեությունը աշխարհում առաջինն ընդունած ազգ: Հայ եկեղեցու շնորհիվ հայը ապրեց հոգևոր-բարոյական առաջընթաց, ունեցավ մտավոր զարթոնք, ստեղծեց բարձրարժեք մշակութային գործեր և դասվեց քաղաքակիրթ ազգերի շարքին: Հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությունը անհնար է տարանջատել:

« Երկուքին իրարմէ անջատումը կոչնչացնե երկուքն ալ»:

Եղիշե Արքեպիսկոպոս Տէրտէրեան

6-րդ դասարանում մենք արդեն պատրաստ էին այցելություններ կատարել առավել հեռու գտնվող պատմամշակութային վայրեր,տուն – թանգարաններ, եկեղեցիներ և այլն:

7,8,9-րդ դասարաններում մեզ սպասում էին ամենաբարդ, ամենահետաքրքիր, ամենապատմական, ամենաչմոռացվող և չկրկնվող արշավներն ու այցելությունները, որոնք մանրակրկիտ ներկայացված են գլուխ II- ում:

ԳԼՈՒԽ I

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԵՆՔ ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մեր այցելությունների հիմքում դրվեց մի շատ կարևոր, բայց առաջին հայացքից անհնար թվացող մի գաղափար-**մեր համատեղ 5 տարիների աշխատանքի ընթացքում հասցնել բացահայտել ՀՀ բոլոր 10 մարզերը:**

Հենց այս գաղափարն էլ դարձավ մեր գործողությունների անկյունաքարը, որ **պակաս կարևոր չէ, այն ողջունելի դարձավ և ծնողական համայնքի և** աշակերտների կողմից:

Ստորև կներկայացնեմ այն վայրերը, որոնք մենք այցելել ենք 5-9-րդ դասարաններում 2017-2022-թթ.-ի ընթացքում՝

Արմավիրի մարզ

1. Զվարթնոցի տաճար
2. Մեծամորի թանգարան
3. Սբ. Հռիփսիմե եկեղեցի
4. Սբ. Գայանե եկեղեցի
5. Սարդարապատի թանգարան-հուշահամալիր
6. Ոսկենի գինիների գործարան

Սյունիքի մարզ

Շաքիի ջրվեժ

Վայոց ձոր

1.Պարույր Սևակի տուն-թանգարան

2. Թռչունների քարանձավ

3. Նորավանք

4. Ջրովանք

5.Սպիտակավոր եկեղեցի

6. Գարեգին Նժդեհի գերեզման

Շիրակի մարզ

1.Գյումրիի Շիրազի տուն-թանգարան

2.Մհեր Մկրտչյանի տուն-թանգարան

3. Յոթ վերք եկեղեցի

4. Զոհվածների հուշարձան

5. Պլպլան ժամ

6. Չիթողցոնց տուն

7. Գյումրու կենցաղի թանգարան

8. Ստ.Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն

Լոռու մարզ

1. Թումանյանի տուն -թանգարան
2. Դսեղ
3. 40 մանկանց եկեղեցի
4. Սբ.Գրիգոր եկեղեցի
5. Լոռվա ծովեր
6. Հաղպատ
7. Սանահին
8. Օձուն
9. Մենձ Էր քարայր
10. Ախթալա



Գեղարքունիքի մարզ

1. Սևանա լիճ

2. Հայրիվանք

3. Արմաղան լեռան գագաթի հաղթահարում (2829 մ.)

Կոտայքի մարզ

1. Ծաղկաձոր-Կեչառիսի վանական համալիր

2. Օրբելյան եղբայրների տուն-թանգարան

3. Աղվերան

Արարատի մարզ

Խոր Վիրապի վանք

Տավուշի մարզ

1. Դիլիջանի երկրաբանական թանգարան
2. Գոշավանք
3. Ջուխտակ վանք
4. Մաթոսավանք
5. Աղստև գետի ափին

Արագածոտնի մարզ

1.Տեղեր

2. Արշակունիների տոհմական դամբարան

3. Սաղմոսավանք

4. Օհանավանք

5. Ծաղկեվանք

6. Բյուրական

7. Վիկտոր Համբարձումյանի անվան տուն-թանգարան

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեր արշավներին սկսեցին ակտիվ մասնակցել ոչ միայն երեխաները, այլ նաև նրանց քույր-եղբայրները, մայրիկները, նույնիսկ տատիկները, այն դեպքում, երբ յուրաքանչյուր արշավի ընթացքում մենք հաղթահարել ենք միջինը 15-30 կմ տարածք, երբեմն նաև իրականացրել ենք բարդ քայլարշավներ:

Եվ դա տեսնել էր պետք, թե ինչ խանդավառությամբ ու հաճույքով էին բոլորը հաղթահարում արշավի ժամանակ հանդիպած դժվարությունները՝ ամեն անգամ բացահայտելով մեր հայրենիքի չքնաղ և շատերի կողմից չբացահայտված անկյունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունքում 5 տարիների ընթացքում մենք բացահայտեցինք ՀՀ-ն բոլոր 10 մարզերը: Ուզում եմ նշել, որ ամեն ինչ չէ, որ հարթ է ընթացել, ունեցել ենք բազում դժվարություններ, որոնք կարողացանք **հաղթահարել** միայն ունենալով անսահման սեր դեպի մեր հայրենիքը և մեծ ցանկություն բացահայտելու այն ամբողջությամբ: Այսպիսով գրեթե անհնարին թվացող նախագիծը այլևս դարձավ իրականություն:

Սովորեցինք, որ հայրենիքը ամեն մեկիս մեջ է, հայրենիքը մեր օդն է, ջուրը, մեր հոգին և որ միայն հայրենիքում են երկու ոտքդ ամուր հողի վրա:

Սա է մեր հայրենիքը ու մենք չենք կարող չսիրել այն, մենք հպարտ ենք ,որ հայ ենք, որ ապրում ենք Հայաստանում և խոսում ենք հայերեն:

Հայաստանը մենք ենք՝ ես և դու, մեզանով է մեր հայրենիքը կանգուն, մենք ենք նրա ապագան, նրան շենացնողն ու պաշտպանողը: Եվ ուրեմն պիտի գուրգուրենք ու փայփայենք այն ու երբեք, երբեք չլքենք:

Այսպիսով ի մի բերելով կատարածս աշխատանքը ես ինձ համար արեցի հետևյալ **եզրահանգումները՝**

1. Չկա վատ աշակերտ, կա աշակերտ, ում պետք է պարզապես մոտիվացնել ու սիրել տալ այն, ինչ նա մինչ այդ չի սիրել:
2. Համոզվեցի, որ անհնարին ոչինչ չկա, պարզապես մեծ ցանկություն է պետք:
3. Աշխատանքի ավարտից հետո ես ունեցա աշակերտներ, ում ես դարձրել էի **հայրենաճանաչ** և անսահման հպարտ էի դրա համար: Եվ հիմա ես համոզված եմ, որ հենց այս աշակերտներն են լինելու ապագա, լրիվ այլ որակներով քաղաքացիները, ում կարելի է վստահել մեր հայրենիքի ճակատագիրը, որովհետև հենց նրանք են տեսել ու զգացել հայրենիքի իրական ուժը, դարերից եկող մշակութային արժեքները և խորապես գիտակցում են, որ իրենց է վերապահված այդ արժեքների պահպանումն ու փոխանցումը հաջորդ սերունդներին:

Եվ վերջում ուզում եմ մեջ բերել աշակերտներիցս մեկի՝ Թովմասյան Միերի խոսքը «Վերջին դաս» միջոցառումից հետո, երբ գրկախառնվելով ինձ նա ասաց. «Ընկեր Համբարձումյան, վաղուց ուզում էի մի բան խոստովանել, ես միշտ կարծել եմ , որ սիրել եմ իմ հայրենիքը, բայց հիմա հասկանում եմ, որ ես այն սիրում եմ հիմա, սիրում եմ անսահման սիրով, որի գլխավոր մեղավորը հենց դուք եք »:

Ահա՛ այն խոսքերը, որ դարձան վերջնարդյունքն իմ աշխատանքի և դարձան հզոր շարժիչ ուժ հաջորդ դասարանում նույն ոգևորությամբ աշխատելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի ՆԱԽԱԳԻԾ /Հայոց պատմություն/

2.Հայաստանի պատմամշակութային վայրեր

3. Հայաստանի պատմամշակութային վայրեր և կոթողներ

/http://www.koghb.am/index.php/hy_AM/history/historical-places/

4.Կրթադիտակ: Հայրենասիրության դաստիարակության մեթոդները

https://krtaditak.am/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5/